

Թեստ կերպարվեստից և կիրառական արվեստից

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Գործնական աշխատանքը կատարեք գործնական աշխատանքի համար հատկացված թերթիկի վրա: Գործնական աշխատանքը (առաջադրանք 26) կատարելու համար Ձեզ բաժանել են մատիտ, ռետին և սրիչ:

Գործնական առաջադրանքի համար հատկացված թերթիկի վրա աշխատեք մատիտով: Մատիտ թույլատրվում է գործածել միայն այս առաջադրանքը կատարելու համար:

Թեստի առավելագույն միավորն է՝ 60:

Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ:

Մաղթում ենք հաջողություն :



№ 1-19 առաջադրանքների հրահանգ – (Յուրաքանչյուր ճիշտ պատասխան ` 1 միավոր)- Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ընտրված պատասխանը տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա հետևյալ կերպ` պատասխանների համապատասխան վանդակում դրեք X նշանը: Ոչ մի ուրիշ նշում` հորիզոնական կամ ուղղաձիգ գծեր, շրջագծում և այլն, համակարգչային ծրագիրը չի ընկալում: Եթե ցանկանում եք պատասխանների թերթիկի վրա ուղղել պատասխանն, ամբողջությամբ ներկեք վանդակը, որտեղ դրել եք X նշանը, որից հետո նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Հնարավոր չէ երկրորդ անգամ ընտրել այն պատասխանը, որն ուղղել եք:

(1) 1. Եռաչափ n° թ պատկերն է կոչվում կինետիկ քանդակ:

ճ) շուրջն ազատ տարածությամբ,

Ն) շարժվող դետալներով,

Շ) պատի հարթության վրա խիստ ուռուցիկ,

Ը) բրոնզից ձուլված:

(1) 2. Գեղարվեստական ո՞ր միջոցի անտեսումը կհանգեցնի քանդակի «տապալման»:


ա) շարժման,

ծ) ամբողջականության,

գ) հավասարակշռության,

զ) հիմնականի առանձնացման:

(1) 3. Ո՞ր ճարտարապետական ոճին/ժամանակաշրջանին է պատկանում Ռավեննայում գտնվող Սան Վիտալեի եկեղեցին:



- ա) ռոմանական,
- բ) բյուզանդական,
- գ) գոթական,
- դ) վերածննդի:

(1) 4. Թվարկվածներից ո՞ր կառույցն է ներկայացված լուսանկարում:



ա) Սբ. Մադլեն եկեղեցին,

ծ) Կարակալայի բաղնիքները,

գ) Մարցելա թատրոնը,

դ) Հռոմի պանթեոնը:

(1) 5. Իր ստեղծագործական գործունեության ընթացքում Բրանկուզին ստեղծել է քանդակների մի ամբողջ շարք, ներկայացնելով թռչուններին թռչելու պահին: Ձեր կարծիքով ինչո՞վ էր ոգեշնչված արվեստագետը:



ա) սեփական վաղ շրջանի ստեղծագործություններում մշակված գաղափարներով,

ծ) այլ նկարիչների կողմից ստեղծված ստեղծագործությունների ուսումնասիրությամբ,

զ) ինչպես է աչքն ընկալում թռչող օբյեկտը,

զ) ինչպես է փոփոխվում պատկերը լուսավորության հետ միասին:

(1) 6. Ո՞ր նիդեռլանդացի նկարչի արվեստի գործի ժամանակակից մեկնաբանումն (ինտերպրետացիա) է ներկայացված նկարում:



- ա) Յան Վերմեերի,
- բ) Ռեմբրանդ Հարմենս վան Ռեյնի,
- գ) Վան Գոգի,
- դ) Պիտ Մոնդրիանի:

(1) 7. Ի՞նչ տեսարաններ են պատկերված մարինա ոճի կերամիկական ամանների մակերեսին:

ճ) քաղաքի,

Ն) կենդանական աշխարհի,

Շ) ծովի,

Ը) բուսական աշխարհի:

(1) 8. Արվեստի ստեղծագործություններում հաճախ հստակեցվում են տվյալ պահին համապատասխան կյանքի հակումները և կանոնները: Տասնվեցերորդ դարի ֆլամանդական հասարակության ո՞ր առանձնահատկությունն է արտահայտում ստորև ներկայացված Մարինուս Ռայմերսվալի «Դրամափոխը և նրա կինը» կտավը:



- ա) գեղերային անհավասարության,
- բ) լուսավորության գաղափարական ազդեցության,
- գ) մերկանտիլիզմի վերելքի,
- դ) հասարակության դասակարգային տարբերակման:

(1) 9. Ներկայացված նմուշներից ո՞րն է պատկանում դաջարական արվեստին:

ա)




բ)



գ)



դ)



(1) 10. Թվարկաձևերից ո՞ր դրույթն է ճիշտ:

ա) Էքսպրեսիոնիզմ - ձևերի չափազանցման միջոցով աշխարհի իրատեսական պատկերում:

Ն) Էքսպրեսիոնիզմ - ձևերի չափազանցման միջոցով զգացմունքների սուր պատկերում:

Ճ) Էքսպրեսիոնիզմ - աշխարհի անուղղակի, այլաբանությամբ պատկերում:

Գ) Էքսպրեսիոնիզմ – աշխարհի առեղծվածային պատկերում:

(1) 11. Ո՞րն է Մարկ Շագալի թեմաների և պատկերների մեծամասնության հիմքը՝ ինչպես ներկայացված նկարում, այնպես էլ նրա ողջ ստեղծագործության մեջ:



ս) Սալվադոր Դալիի և այլ սյուրռեալիստների ստեղծագործությունները,

ծ) հիշողությունները՝ կապված գյուղի հետ, որտեղ նա անցկացրել է իր մանկությունը,

ց) Զիգմունդ Ֆրոյդի տեսությունները, որոնցով հմայված էր նկարիչը,

Պ) նկարչի սիրո պատմությունը, որը պատճառ դարձավ նրա ողբերգական ճակատագրի:

(1) 12. Խեցեղենի ներկայացված նմուշներից ո՞րն է հին չինական:

ա)



բ)



գ)



դ)



(1) 13. Ո՞ր գեղարվեստական առանձնահատկությունը բնորոշ է Ալեքսանդր Կուլդերի ստեղծած դիմանկարին:



ա) խոսուն գրաֆիկական ուրվանկարի նման բավական արտահայտիչ է,

ծ) օգտագործված է մետաղալար՝ տարածության մեջ գրաֆիկական պատկեր ստեղծելու համար,

ճ) գեղարվեստական փորձը դարձել է դիմանկարային բնութագրի հմուտ միջոց,

դ) դինամիզմն ավելացնելու համար կիրառված են շարժական դետալներ:

(1) 14. Թվարկածներից, ո՞ր ատանձնահատկությունն է բնորոշ Վերածննդի և Միջնադարի գեղանկարչությանը:

ա) լայնորեն տարածված են քրիստոնեական թեմաներն ու գեղարվեստական պատկերները,

ծ) դասական թեմաներն ավելի արդիական են, քան կրոնական թեմաները,

զ) ակտիվորեն գործածում են հեռանկարի մասին գիտելիքները,

զ) ակտիվորեն գործածում են ձևերի լույս-ստվերով մոդելավորումը:

(1) 15. Յոգեֆ Ալբերտի ներկայացված գեղարվեստական կոմպոզիցիայի նման, ո՞ր նկարիչներն են օգտագործում այն մեթոդը, որտեղ գույների փոխադարձ կապը կամ փոխազդեցությունը որոշում է դրանց գեղարվեստական հատկություններն ուժեղացնելու/բացահայտելու և հստակ ընկալելու հնարավորությունը:




- ա) Վասիլի Կանդինսկին և Մարկ Ռոթկոն,
- ծ) Մորիս Էշերը և Ջեքսոն Պոլլոքը,
- զ) Պիտ Մոնդրիանը և Էգոն Շիլեն,
- զ) Խոան Միրոն և Միքելանջելոն:

(1) 16. Ներկայացված դրույթներից ո՞րը չի համապատասխանում Գելարիի Մայր տաճարի նարտեքսի XII դարում ստեղծված որմնանկարների գեղարվեստական առանձնահատկությանը, որոնք արտացոլում են աշխարհի եկեղեցական ժողովները:



- ա) կերպարների պատկերները մոնումենտալ են, դեմքերը՝ արտահայտիչ,
- բ) մարդկանց յուրաքանչյուր առանձին խումբ համախմբված է և ակնհայտորեն առանձնացված մյուս խմբերից,
- գ) յուրօրինակ մերձեցում է նկատվում Աթենիի Սիոնի որմնանկարչության հետ, թեև գիծն ավելի դյուրաթեք է,
- դ) որմնանկարչությունը չունի պատմական հիմք:

(1) 17. Գեղարվեստական հիմնական միջոցներից ո՞րն է գերակշռում ներկայացված կոմպոզիցիայում:



ա) դինամիկան,

ბ) ռիթմը,

գ) ասիմետրիկ հավասարակշռությունը,


դ) տարրերի կրկնելիությունը:

(1) 18. Ինչի՞ն է ծառայում Ռեմբրանդտի «Գիշերային դետք» կտավում կիրառված սուր հակադրությունը:



- Տ) ձևերի կրկնելիության շեշտադրմանը՝ ռիթմիկ հերթագայությունն ստեղծելու համար,
- Ծ) լուսային էֆեկտի ստեղծմանը՝ զգացմունքային հնչեղությունը բարձրացնելու նպատակով,
- Յ) գունային գրադացիայի ստեղծմանը՝ ծավալի պատրանքն ուժեղացնելու նպատակով,
- Ծ) մեծ ձևաչափի վրա փոքր տարրերի կազմակերպմանը՝ կոմպոզիցիոն հավասարակշռության համար:

(1) 19. Ո՞ր ձևակերպումը չի համապատասխանում ներկայացված ճարտարապետական կառույցի առանձնահատկություններին:



- ա) շենքը բրուտալիստական տարրերով հետկոնստրուկտիվիստական ոճի նմուշ է,
- բ) շենքի կառուցվածքը չի ստեղծում ամրության ապահովման կատարյալ երաշխիք,
- գ) ճակատների վրա պատուհանների մինիմալիստական երկրաչափական ձևերը ստեղծում են շինության դեկորատիվ ձևավորման համակարգ,
- դ) շենքի ճարտարապետական կառուցվածքը փոքր հողամասի վրա մեծ մակերես ունեցող շենք կառուցելու հնարավորություն է տալիս:

№ 20-25 առաջադրանք: «Ճիշտ է - Միսալ է»

Առաջադրանքի հրահանգ. Ուշադիր ծանոթացե՛ք տրված դրույթներին, եթե համարում եք, որ դրույթը ճիշտ է, ապա նշե՛ք համապատասխան վանդակը: Նման դեպքում մեկնաբանություն չի պահանջվում: Եթե համարում եք, որ դրույթը սխալ է, ապա նշե՛ք համապատասխան վանդակը և հատուկ հատկացված տեղում գրե՛ք ճիշտ ձևակերպումը:

Դիտողություն. Եթե կարծում եք, որ ձևակերպումը սխալ է և գտնում եք, որ վկայության մեջ տրված պարզաբանումը ինքնին ճիշտ է ձևավորված, թեև չի ներկայացնում տրված տերմինի և/կամ բառի բացատրությունը, ապա անփոփոխ թողե՛ք պարզաբանումը և այդ նույն պարզաբանման համար փնտրե՛ք և համապատասխանեցրե՛ք համարժեք տերմին և/կամ բառ:


Նմուշ.

დავადება №

ფაქტობრივად მქარაობს, ხარკი მონოპოლიზაციის ფა-
ქტის მონოპოლიზაცია, კოლექციური ფაქტობა.

(1) 20. Գործիկան պատկանում է միջնադարյան ժամանակաշրջանին:

(1) 21. Նկարում պատկերված է դեկորատիվ - կիրառական արվեստի նմուշ:



(1) 22. Պանդուսն աստիճաններով վեր բարձրանալու միջոց է:

(1) 23. Ամֆորա կոչվում է հին հունական խեցենկարչության երկրաչափական ոճը:

(1) 24. Հեռանկարը դիտակետ չէ:

(1) 25. Հռոմի Իննուկենստիոս X պապի դիմանկարը ստեղծել է Կարավաջոն:



(7) № 26 Առաջադրանք. *Գործնական աշխատանք*
Հրահանգ.

Լուսանկարներում ներկայացված առարկաներով՝ թղթե փաթեթի և տանձի պատկերներով ստեղծեք մեկ նատյուրմորտ: Նախատեսելով կոմպոզիցիոն բաշխման սկզբունքը պատկերը տեղադրեք նկարի հարթության վրա: Պահպանեք առարկաների համապատասխան համամասնությունները, հաղորդեք դրանց ֆակտուրա և ծավալ: Առաջադրանքը կատարեք գործնական աշխատանքի համար հատկացված թերթիկի վրա:



(1) Առաջադրանքներ № 27-29. Առաջադրանք. *Ժամանակագրության որոշում:*

Առաջադրանքի հրահանգ. Դասավորեք (հնագույնից մինչև նորագույն) գեղարվեստական հոսանքները, նկարիչներին, ճարտարապետական և կերպարվեստի նմուշներն՝ ըստ դրանց ստեղծման ժամանակի: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում: Նկատի ունեցեք, որ աղյուսակում գրվում է միայն ընտրած միավորի համապատասխան թվանշանը:

(1) 27. Դասավորեք Ադամի և Եվայի թեմայով ստեղծված արվեստի նմուշները՝ ըստ դրանց ստեղծման ժամանակի:


1.



2.



3.




4.



(1) 28. Դասավորեք արվեստի նմուշները՝ ըստ դրանց ստեղծման ժամանակի:

1.



2.



3.








4.








(1) 29. Դասավորեք արվեստի նմուշները՝ ըստ դրանց ստեղծման ժամանակի:

1.	2.	3.	4.
			

(3) № 30 Առաջադրանք. Համապատասխանության որոշում՝ B սյունակում ներկայացված արվեստի նմուշները համապատասխանեցրեք A սյունակում թվարկված երկրներին: Հաշվի առեք, որ մեկ երկրին համապատասխանում է միայն մեկ նմուշ:

A	1. Եգիպտոս	2. Հունաստան (Կիկլադներ)	3. Միջագետք		
B	<p>ա.</p> 	<p>ծ.</p> 	<p>ճ.</p> 	<p>ը.</p> 	<p>յ.</p> 

(3) № 31 Առաջադրանք. Համապատասխանության որոշում՝ B սյունակում ներկայացված ճարտարապետական տարրերը համապատասխանեցրեք A սյունակում ներկայացված դրանց անվանումներին: Հաշվի առեք՝ մեկ անվանմանը համապատասխանում է միայն մեկ նկար:

A. 1. Թաղ	2. Պիլաստր	3. Արխիտրավ
<p data-bbox="264 380 346 419">B. Տ.</p> 	<p data-bbox="932 387 975 426">Ճ.</p> 	<p data-bbox="1671 387 1714 426">Թ.</p> 
<p data-bbox="264 867 300 907">Ց.</p> 		<p data-bbox="1671 875 1707 914">Չ.</p> 

Գրավոր առաջադրանքների հրահանգ

Ուշադիր ծանոթացե՛ք առաջադրանքներին և ըմբռնե՛ք դրանք:

Աշխատանքը կատարեք դյուրըմբռնելի ձեռագրով: Այն հատվածները, որոնք դժվար ընկալելի են, չեն ստուգվի և գնահատելիս չեն նկատառվի:

Գրավոր աշխատանքներին կից ներկայացված են ցուցումներ: Այդ ցուցումներին պետք է պատասխանեք այնպես, որ աշխատանքն իմաստային տեսանկյունից լինի ամբողջական, խուսափեք հարցերին տրված մեխանիկական պատասխաններից:

Ձեր կարծիքը ձևակերպեք պարզ, հստակ և հիմնավորված: Աշխատանքը կգնահատվի, նրանում դրսևորված փաստարկման (սեփական կարծիքն օրինակներով հիմնավորելու) և անկախ մտածողության ունակության համաձայն:

Դատողությունը պետք է լինի տրամաբանական, միտքը հասկանալի արտահայտված:

Տեղափոխեք աշխատանքը պատասխանների թերթիկի վրա:


Պատասխանների թերթիկում թույլ տրված սխալի վրա ուղղակի գիծ քաշեք, չի թույլատրվում առնել այն փակագծերի մեջ կամ խազմզել:

(4) № 32 Առաջադրանք. Ներկայացված գրաֆիկական պատկերները Լադո Գուդիաշվիլիի այլաբանական բնույթի ստեղծագործություններն են «Երգիծական գրաֆիկա» շարքից (1940-ական), որոնցում հստակ դրսևորվում է նկարչի վերաբերմունքը առկա իրականության նկատմամբ: Ընտրե՛ք չորս աշխատանքներից մեկը, վերլուծե՛ք և որոշե՛ք.

1.



2.



3.



4.



ճ. Դարաշրջանի կամ ընդհանուր առմամբ մարդկության ո՞ր արատավոր երևույթի կամ հատկության այլաբանությունն է ստեղծել նկարիչը: Դատողություն արեք ստեղծագործության բովանդակային և տեսողական համապատասխանության շուրջ:

Ծ. Բնութագրեք ստեղծագործության գեղարվեստական լեզուն և բացատրե՛ք, օգնում է արդյոք այն գեղարվեստական պատկերի բնույթը փոխանցելու հարցում:

(15) № 33 Առաջադրանք. *Արվեստի նմուշի նկարագիր-վերլուծություն:*

Ըմբռնե՛ք, վերլուծե՛ք և գնահատե՛ք ստորև ներկայացված արվեստի նմուշը:



Կատարեք առաջադրանքն, ըստ ցուցումների.

(3) **33.1** Նկարագրե՛ք և բնութագրե՛ք կոմպոզիցիան: Ո՞ր ժանրին է պատկանում տրված կոմպոզիցիան: Նյութի և տեխնիկայի հիման վրա որոշե՛ք, թե կերպարվեստի որ ճյուղի նմուշն է ներկայացված:

(3) **33.2** Վերլուծե՛ք և համառոտ ձևակերպե՛ք, թե ինչ արտահայտչամիջոցներ ու հնարքներ է կիրառում հեղինակը նկարում գեղարվեստական պատկերի բնույթ ստեղծելու համար:



(3) **33.3** Գեղարվեստաոճական բնութագրիչների հիման վրա որոշե՛ք հոսանքը, որոշեք, թե որ երկրի և դարաշրջանի արվեստի նմուշն է ներկայացված, նշեք հեղինակի անունը:

(3) **33.4** Գնահատե՛ք աշխատանքը՝ արտահայտե՛ք Ձեր վերաբերմունքը, մտորե՛ք և հիմնավորե՛ք Ձեր կարծիքը:

(3) **33.5** Դատողություններ արե՛ք ազդեցությունների շուրջ: Դիտարկեք ստեղծագործությունը պատմամշակութային և ստեղծագործությանը համապատասխանող այլ համատեքստում: